

Թիւնները չեն համաձայնի ձեռագիր հին շարականոցներու: Արդ, անհարազատ կը թուին:

Պետրոսի եւ Պողոսի - Օրհ. Յնծայ ախօր եկեղեցի Աստուծոյ.
Մկ. Որ արփիահարալ լուսայ ծագամար.
Հբ. Որ անպարագիրն է յեռթեան.
Որդւոցն Որոտման - Օրհ. Որ էն յեռթեան որդի միշտ յէէն.

2. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՆՏՈՆԻ

«Շարակամ մի Ամոռնի» Կիրակոսի բացատրութիւնը՝ Սահակ Վրդ. Ամատունի կը հասկնայ «Որ ի հանդէս քննութեամբ յայտնի Օրհնութիւնը, որ բաղկացած է երեք տանից, եւ դրուած է Որ գերագանցեալ գտար յայտնի հին Օրհնութեան տակ, կից, որն է նոյնպէս երեք տուն»³²: Ամատունիի ենթադրութիւնը ոչ մէկ զբաւոր եւ դրական փաստ ունի, մանաւանդ որ անսովոր երեւոյթ մըն է որ Շնորհալիէ առաջ կանոնի մը Օրհնութիւնը ներկայանայ երեք տունով, մինչ առանց բացատրութեան՝ կը պահանջէ գոնէ վեց տուն: Նկատի առնել նաեւ թիւ 97 ձեռագիրը, ուր Ամատունի Օրհնութիւնը կը ներկայանայ վեց տունով, եւ նոյնը կրճատ ձեւով օրինակուած է թիւ 9838 Երեւանեան ձեռագիրին մէջ: Ուստի, Կիրակոս Գանձակեցիի «Շարականութեան» բացատրութիւնը կը մնայ մութ եւ կարօտ լուսաւ:

3. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ

«Երկու (շարական) Թէոդոսի», Կիրակոսի համաձայն գրած է Շնորհալի, բայց թէ որոնք կրնան ըլլալ այդ շարականները՝ գրեթէ անհնարին է ստուգելը: Հնագոյն շարականոցը (թիւ 97) «Կանոն թագաւորաց» խորագիրին տակ ունի ամբողջ կանոնը, սկսեալ Օրհնութենէն մինչեւ Մանկունք. այս վկայութեան քով՝ 1193ի շարականոցը ունի նոյն կանոնը՝ կրճատ գրութեամբ, բացի Օրհնութենէն, որ բաց շարական) Թէոդոսի» բացատրութիւնը յարմարցնել կանոնին Օրհնութեան, որովհետեւ եթէ Շնորհալիինն է կանոնին Օրհնութիւնը, Կիրակոս պէտք էր յիշատակել Օրհնութիւնը, ինչպէս ըրած է Գրչարանը առաջելոց եւ Որոտմանց Օրհնութիւններուն համար: 1193ի շարականոցը կանոնէն անմիջապէս ետք ունի «Շարական Տրդատայ թագաւորի» Որ գերագոյն քան զբնութիւն պարականոն շարականը, զորուած բաց գրութեամբ, ինչ որ բացակայ էր թիւ 97էն. արդեօք կա-

րելի՞ է «երկու (շարական)» բացատրութեան գոնէ մէկ շարականը յարմարցնել այս վերջինին: Այս տարակոյսներուն մէջ՝ ամենեւին անընդունելի կը մնայ ենթադրութիւնը Սահակ Վրդ. Ամատունիի, որ Թէոդոսի Օրհնութիւնը (Որ գերկնաւոր թագաւորութեանդ քոյ) Սարգիս Երէցի շարականոցին մէջ ընկերացած տեսնելով պարականոն ամբողջական կանոնի մը (Հարցէն մինչեւ Ճաշու շարական), կը համարձակի գրել. «մեր յառաջ բերած շարականի կոկ եւ պատուական գրութիւնները վկայում են որ Շնորհալին է գրել»³³, որու իբր ապացոյց ունի միայն իր անձնական դատողութիւնը:

4. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՃԱՇՈՒ ՔԱՌԱՍՆԻՑ

«Եւ (շարակամ) մի Քառասնիցն» գրած է Շնորհալին, Կիրակոս Գանձակեցիի համաձայն, սակայն ոչ մէկ տեղ նշանակուած կը գտնենք՝ թէ ինչ է այդ շարականը: Սարգիս Երէցի տօնացոյցը կը յանձնարարէ Քառասնից տօնին օրը «Հարցն իւրն, եւ զնորերն այլ ասա»: Սահակ Վրդ. Ամատունի այս նոր կոչումները կը համարի ասա: Սահակ Վրդ. Ամատունի մարտիրոսացն» եւ «Այսօր մեծապէս Շնորհալիի «Այսօր գանյաղթելի մարտիրոսացն» եւ «Այսօր մեծապէս յայտնի Օրհնութիւնը, որոնք բաց գրութեամբ գրուած են, «երեք տանից բաղկացած Այսօր ընդ ամարմնոցն դասապարհն յայտնի հին Օրհնութեան տակ»³⁴: Ամատունիի ըրածը ենթադրութիւն մըն է, հիմնուած Սարգիս Երէցի շարականոցին վրայ, մինչ նոյն Սարգիս Երէց՝ Շնորհալիի շարականները թուարկած առաջին յիշեր Քառասնից շարականները: Ուղիղ չէ նաեւ Կիրակոսի «(շարական) մի» բացատրութիւնը մեկնել երկու շարականով, այսինքն՝ ներկայ Օրհնութեան երկրորդ մասով եւ Ճաշու շարականով: Հոս եւս կը ստիպուինք կրկնել՝ թէ հին շարականոցի մէջ Օրհնութիւնը կը ներկայանայ իր այժմեան ձեւով (վեց տուն), եւ ոչ մէկ ձեռագրական հետք ունինք որ նախապէս Քառասնից Օրհնութիւնը բաղկացած ըլլայ երեք տուններէ, ու Շնորհալիով ստացած ըլլայ իր լեզուով: Դիտելի է նաեւ որ թիւ 97 հնագոյն շարականոցը՝ Քառասնից կանոնը ունի կատարեալ ձեւով, Օրհնութենէն սկսեալ մինչեւ Մանկունքը. կը պակսի Ճաշու շարականը «Այսօր մեծապէս պանծացեալ»: Նոյնը կը կրկնէ 1193ի օրինակը, բնականաբար կրճատ ձեւով (Օրհնութենէն Մանկունք): Արդ, ապահով չի թուիր՝ հիմնուելով երկու դար ետք Սարգիս Երէցի ներկայացուցած ձեւին վրայ, ուր Օրհնութեան երկրորդ մասը եւ Ճաշու շարականը բաց գրութեամբ են, եղբայրացնել թէ անոնք Շնորհալիինն են: Հնագոյն շարականոցներու մէջ

33. Ամդ, էջ 20:

34. Ամդ, էջ 67:

32. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԱՄՍՏՈՒՆԻ, Հիմ եւ մօր պարակամն կամ ամվաւեր շարակամներ, Վաղարշապատ, 1911, էջ 18:

9. ԿԱՆՈՆ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կիրակոս Գանձակեցի եւ Սարգիս Երէց կը լռեն այս կանոնին հեղինակին մասին. Գրիգոր Տաթեւացի իր ցանկին վերջաւորութեան կ'աւելցնէ. «յոմանց լուաք թէ զսուրբ Յակոբին... մեծն Ներսէս է ասացեալ Կլայեցին»։ Կանոնի հեղինակին մասին կան տարաձայնութիւններ, որոնք գեղեցիկ կերպով կը համադրէ Աւետիքեան. «Զշարական սրբոյն Յակոբայ ասեն արարեալ Ներսիսի Կլայեցոյ. բայց Ստեփանոս քահանայ՝ յոտանաւորս իւր՝ ընծայէ Յովհաննու Եղնկացոյ, եւ ի շարակնոցս ինչ երեւի գրեալ ի կատարածի, ընդ շարականս յետին դարու։ Սակայն իմաստքն եւ կազմութիւնն վաճառէն, ոչ օտար ի նախնեացն արուեստարանութենէ»³⁶։

Անթերի են Աւետիքեանի անդրադարձութիւնները, որոնք աւելի շօշափելի ընելու համար, կ'ըսենք թէ կան ձեռագրական տուեալներ ի նպաստ թէ՛ անոր հնութեան եւ թէ՛ նորութեան։

Թիւ 97 շարակնոցը, որ զուրկ է Շնորհալիի շարականներէն, Մծբնայ Հայրապետին կանոնը ունի ձեռագրին սկիզբը, Հին ու աւանդական սուրբերու կանոններու շարքին մէջ, համօրէն Առաքելոց եւ Սեբաստիոյ մանկանց կանոններուն միջեւ։ Արդարեւ, հնագոյն խմբագրութեան պատկանող շարակնոցի մը մէջ՝ Մծբնայ Հայրապետին կանոնին այս տեղը գրաւելը, անոր հնութեան մեծագոյն ապացոյցը կրնանք համարել։ Շարակնոցի վերջնական խմբագրութեան մէջ՝ կանոնը կը փոխադրուի ձեռագրին գրեթէ վերջաւորութեան, Մեսրոպ վարդապետի, Հրեշտակաց, Հայրապետաց կանոններուն միջեւ. ասով հանդերձ՝ ունինք շատ մը ձեռագիրներ, որոնք կը նախընտրեն պահել կանոնը իր աւանդական տեղը, նման թիւ 97 ձեռագրին, այսպէս օրինակ Ս. Ղազարի թիւ 493, 525, 943, 1900 շարակնոցները, գրուած ԺԴ-ԺԵ. դարերուն։

Տարակոյս չի մնար թէ կանոնը իրապէս Հին է, Հին՝ Շնորհալիէ առաջ, եւ որով անբացատրելի կը մնայ թէ ինչո՞ւ կանոնը ստէպ օրինակուած է Թափառական կլիմա նոր շարականներու կարգին։ 1193ի շարակնոցը չի ճանչնար ամբողջ կանոնը, Երուսաղէմի թիւ 1654 ձեռագիրը, յետ աւարտելու Հին կարգաւորութեան պատկանող կանոնները, նոր շարականներու մէջ կ'ընդօրինակէ Մծբնայ Հայրապետին կանոնը։

Հնագոյն խումբի ձեռագիրները հետեւեալ պատկերը կը ներկայացնեն մեզի (Ձեռ. Թ. 97)։

36. Հ. Գ. ԱԻԵՏԻՔԵԱՆ, ամգ, էջ 553։

- օ. Յաղթող եւ սուրբ.
- Ուրախացան զօրք երկնից.
- Հ. Սուրբ եւ տէր եւ ի սուրբս.
- ո. Երկրպագեմք առաջի.
- տ. Թագաւոր Թագաւորաց քրիստոս.
- մկ. Ամուք հաւատոյ եւ պարծանք։

Շարակնոցի նոր խմբագրութեամբ յիշուած Մանկունքը կ'անցնի Տէր յերկնիցի տեղ, իսկ «Թագաւոր Թագաւորաց» շարականը կը դասուի պարականոններու կարգին. իբր նոր Մանկունք կը յայտնուի «Հայրապետ սուրբ եւ ամբիծ», որ հաստատուն կը մնայ բոլոր ձեռագիրներուն մէջ։ Այս կացութեան մէջ՝ կարող չենք անվերապահ կերպով Շնորհալիի ընծայել այս կանոնը։

10. ԿԱՆՈՆ ԾՆՆԴԵԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՁԻ

Գրիգոր Լուսաւորիչէ Ժառանգութիւն մնացած է մեծ հանդիսաւորութեամբ կատարել Յովհաննէս Մկրտիչի տօնը, եւ ասոր իբր պացոյց՝ նախաշնորհալեան շրջանին ունինք երկու ամբողջական կանոններու պատկերներ, որոնք ձեռագիրներու մէջ օրինակուած են իրարու ետեւ, առանց յատուկ վերնագիրներու (Ձեռ. Թիւ 97, Թղ. 141ա-143ա)։

Կանոն Յովհաննու Կարապետի

- օ. Զմարգարէ բարձրելոյն.
- Որ յորովայնէ ընտրեցար.
- Հ. Զուարճանայ այսօր եկեղեցի.
- ո. Ճրագ ճշմարտութեան սուրբ.
- տ. Առաքեալն յԱստուծոյ կարապետ.
- Հ. Նախալուսեան բանին պատմող.
- ո. Կարապետ արքայութեան երկնից.
- տ. Երկնաբազմացին Յովհաննէս։

Այս զոյգ կանոններու շարականները, իրենց պարզութեան եւ գեղեցիկ իմաստներուն համար, կ'ընծայուին Մովսէս Խորենացիի կամ Յովհան Մանդակունիի։ Երեւանի ծանօթ 1193ի շարակնոցը այս կանոնները ունի կրճատ ձեւով, եւ հակառակ որ Շնորհալիի բաղմաթիւ շարականներ որդեգրած է, դեռ իրեն ծանօթ չէ Յովհաննու Մկրտչի ուրիշ կանոն։

ԺԳ. դարէն մեզի հասած շարակնոցներու մէջ կը տեսնուի փոփոխութիւն մը. Հին կանոններէն երկրորդը (Հ. Նախալուսեան Բանին) կ'օրինակուի Զատիկի յաջորդող շաբաթ օրը, իսկ Յովհաննու

Կարապետի հին (օ. Ձմարդարէ բարձրելոյն) կանոնէն առաջ՝ տեղ
կը դրաւ նոր կանոն մը, հետեւեալ պատկերով.

- օ. Արեգական արդարութեան (Ա-Ք).
- հ. Որ աւետարտ քուս.
- ո. Երկնաւոր փեսայ.
- տ. Այսօր ցնծան հրեշտակք.
- մկ. Մարգարէից գերագոյն.
- ճշ. Այսօր ցնծայ եկեղեցի:

Նոր է ուրեմն այս կանոնը՝ նկատմամբ զոյգ հինգ պատկերներու, այնքան որ Ս. Ղազարի ԺԴ. դարու թիւ 925 շարականոցը օրինակած է յաւելուածին մէջ, նոր շարականներու կարգին: Նոյնը կ'ընէ Երուսաղէմի թիւ 1654 հին խմբագրութեան պատկանող շարականոցը:

Նոր կանոնին Օրհնութիւնը գրած է Գրիգոր Սկեւռացի. Սարգիս Երէց բացայայտ կերպով կը գրէ. «Արեգականն արդարութեամբ... Գրիգոր Սկեւռացի» (Արրտ. 1894, 86). ուրեմն՝ վրիպակի արդիւնք պէտք է համարել նոյն Սարգիսի միւս բացատրութիւնը «զՅովաննու Արեգականն արդարութեան... Ներսէս կաթողիկոսն Կլայեցին աւաց»: Գուցէ ակնարկը «Արեգականն արդարութեամբ» կանոնին պատկանող Հարցին եւ յաջորդ շարականներուն է, որոնք թերեւս գրուած ըլլան Շնորհալիէ: Բայց չունինք ձեռագրական նշմարներ, այլ չով Գրիգոր Տաթեւացիի վկայութիւնը եւ ոչինչ աւելի:

11. ԳԿ. ԱԻԱԳ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

«Նորա է, կ'ըսէ Կիրակոս Գանձակեցի, Յարութեան Օրհնութեան երրորդ կողմն». իրմէ ետք՝ նոյնը կը կրկնէ Սարգիս Երէց:

Ո՛չ թիւ 97 շարականոցը եւ ոչ ալ յաջորդաբար որեւէ շարականոց մեզի կու տան նշան մը՝ հաստատելու այս վկայութիւնը. մանաւանդ թէ, Աւագ Օրհնութիւնները ձեռագիրներու մէջ կը ներկայանան մեզի միշտ ութը ձայներով, այսինքն՝ միշտ վառ ձայնին հետ, կազմելով ամբողջութիւն մը: Եթէ ԺԲ. դարուն այդ շարականը նորութիւն մը ըլլար, Երեւանի թիւ 9838 շարականոցը անտարակոյս արձագանք մը պիտի տար մեզի, ինչպէս ըրած է ուրիշ շատ մը շարականներու մասին, մինչ ութը Օրհնութիւններն ալ գրուած են կրճատ ձեւով:

Հացունի խնդրին կը մօտենայ ծիսական կերպով. Աւագ Օրհնութիւններու եւ մարգարէական օրհնութիւններու իրարու հետ ունեցած յարաբերութենէն՝ կ'եզրակացնէ անհրաժեշտութիւնը ութը Աւագ Օրհնութիւններու գոյութեան, ութը ձայներու համաձայն, աւելցնելով թէ «արդէն մէկ ձայնի պակասը Սիւնեցիի կողմէ անմեկ-

նելի է եւ դժուարին է հաւատարմ»³⁷, ու իր կարծիքը հիմնելու համար՝ մէջ կը բերէ Օրպէլեանի վկայութիւնը, թէ Սիւնեցի «բաժանեաց զութ ձայնս եւ կարգեաց շարեաց զՅարութեանն Օրհնութիւնսն»³⁸:

Նոյն տարակոյսը Հացունիէ առաջ ունեցած էր Աւետիքեան, որ Յարութեան ԳԿ Օրհնութեան մէջ «Որ յաթոռս քերովբէականս բազմեցաւ ընդ Հօր» բացատրութիւնը կարդալով Գրիգոր Մագիստրոսի նամակներուն մէջ, կը համարի հաստատել ԳԿ Օրհնութեան գոյութիւնը Շնորհալիէ առաջ:

Բացի այս արտաքին փաստերէն, պատճառ չենք գտներ Սիւնեցին ճանչնալ հեղինակ եօթը Օրհնութիւններու՝ փոխանակ ութի, մանաւանդ որ ծիսական կերպով երգերը բաժնուած էին (գոնէ Շնորհալիի օրերուն) ութը ձայներուն համաձայն, եւ ոչ թէ շաբթուան օրերուն վրայ: Ծիշտ է որ Ստեփանոս Սիւնեցիի օրերուն՝ ժամասացութիւնը իր կազմութեան շրջանին մէջ էր, եւ Աւագ Օրհնութիւնները կ'երգէին ոչ թէ միայն Յինանց շրջանին, այլ տարուան բոլոր կիրակիներուն, նոյնիսկ աղուհացից կիրակիներուն, այնպէս որ մեզի հասած նախաշնորհական տօնացոյցները եւ հարցնացոյցները՝ զառաւորաց կիրակիներուն համար կը նշանակեն յինանց Հարցերը, ենթադրելով անշուշտ ձայնին համաձայն նաեւ Օրհնութիւնները: Նկատելի է նաեւ որ յինանց կանոններու (Հարց, Ողորմեա, Տէր յերկնից) գոյութիւնը՝ Աւետիքեանի համաձայն՝ կը կանխէ Ստ. Սիւնեցին, այնպէս որ իրենց պարզութեան եւ «վայելուչ հնութեան» համար կը վերագրուին խորհրդանշանի եւ կամ ամէնէն ուշ Բարսեղ Զօնի: Արդ, եթէ յինանց շարականները յօրինուած են ութը ձայներուն համաձայն, պատճառ մը աւելի՝ որ Ստ. Սիւնեցի համաձայնէր անոնց:

12. ԿԱՆՈՆՔ ՎԵՐԱՓՈՑՄԱՆ Բ. ԵՒ Գ. ՕՐԵՐՈՒ

Մեզի հասած բոլոր շարականացոյցները, ինչպէս նաեւ Կիրակոս Գանձակեցի, կը վկայեն՝ թէ վերափոխման երկրորդ եւ երրորդ օրուան կանոնները գրուած են Ներսէս Շնորհալիէ: Չենք համարձակ իր ուղղակի հակառակիլ գրաւոր այս աւանդութեան. միւս կողմէ, սակայն, չենք ալ կրնար մեկնաբանել եւ հաշտեցնել ինչ ինչ երեւոյթներ, որոնք հակառակ են աւանդութեան, կամ աւելի ճիշտ՝ չեն զուգադիպիր անոր, հետեւաբար՝ կը թողուն մեծ տարակոյս մը, որու վերջնական լուծումին համար դեռ կարօտ ենք նորանոր աղբիւր-

37. Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ, Պատմութիւն Հայոց Ազօքամատոյցին, Վենետիկ, 1965, էջ 214:

38. Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ, ամդ, էջ 214:

ներու, ձեռագրական խոր պրպտումներու եւ առանձին ուսումնասիրութեան: Հոս կ'ուզենք մատնանշել միայն մէկ քանին, որոնք հարցը լուծելէ աւելի՝ երեւան կը հասնեն:

Գրաւոր աւանդութեան ի նպաստ ունինք Երեւանի 1193ի Երուսաղէմ օրինակուած շարակնոցը, որ երկու յիշեալ կանոնները ունի բաց գրութեամբ, իբր նշան անոր նոր ըլլալուն: Տեսնենք թէ հնարաւոր է տալ մեկնաբանութիւն մը այս եղելութեան:

Մեր ուսումնասիրութեան ընթացքին՝ շատ անգամներ անդրադարձանք Ս. Ղազարի թիւ 97 շարակնոցին մասին, եւ ստուգիւ տեսնելով թէ հոն կը պակսին Ծնորհալիի ընծայուած շարականներն ու կանոնները, եւ թէ շարակնոցը կը պատկանի հին խմբագրութեան, այսինքն՝ կը հանդիսանայ տիպար օրինակ մը նախաշնորհալեան շարակնոցին. նման եզական պարունակութեամբ ձեռագիր շարակնոցներ ամենեւին չեն հասած մեզի, որովհետեւ բոլորովին մոռացութեան կը մատնուին երբ թիւ. դարուն վերջը կը յայտնուի նոր խմբագրութիւնը, ճոխացած Ծնորհալիի շարականներով: Այս ամէնը պէտք է յատկանշական եւ եզական երեւոյթ մը համարինք. մեծ է զանազանութիւնը հին եւ նոր խմբագրութեանց միջեւ, ուր յանկարծ միահամուռ կը յայտնուին Ծնորհալիի շարականները, որոնցմէ ամենեւին զուրկ է թիւ 97 շարակնոցը:

Արդ, Ս. Ղազարի թիւ 97 շարակնոցը ունի վերափոխման յաջորդ օրերու կանոնները. ուստի ինքնաբերաբար հարց կը ծնանի թէ ինչպէս կարելի է բացատրել անոնց ներկայութիւնը հոն՝ ուր բացակայ են Ծնորհալիի յայտնի միւս շարականները: Գուցէ լուծուած համարուի խնդիրը՝ ենթադրելով թէ վաղ ժամանակներէ, թերեւ Ծնորհալիի իսկ կենդանութեան սկսած ըլլան կիրարկուել այս կանոնները, անկախ Ծնորհալիի միւս կանոններէն: Սակայն, այս վարկածն ալ կը հանդիպի նոր դժուարութիւններու:

Որոշ է որ սկզբնական շրջանին՝ վերափոխումը, վարդավառը ու Հոգեգալուստը՝ Հայ եկեղեցւոյ մէջ ալ կը տօնախմբուէին մէկական օր, եւ Ծնորհալիով սկսած է անոնց եօթեայ կամ իննօրեայ տօնակատարութիւնը: Հասած են մեզի ձեռագիր շարք մը շարակնոցներ, որոնք կարելի է անուանել անցքի շրջանի շարակնոցներ, որովհետեւ զօր մը կը կազմեն հին եւ նոր խմբագրութիւններուն միջեւ, ունենալով հին շարադասութենէն հատուածներ, համադրուած նոր շարադասութեան մը հետ: Անբացատրելին այն է որ մինչեւ այսօր չէ յայտնուած ոչ մէկ շարակնոց, որ վերափոխման համար ունենայ լոկ մէկ օրուան պատկեր. առանց բացառութեան՝ միշտ եօթեայ են կանոնները. մինչ՝ ասոնց կողքին՝ նոյն շարակնոցները, վարդավառի եւ Հոգեգալուստեան համար, ունին հին աւանդութիւնը, միօրեայ պատկերներով: Ինքնաբերաբար ուսումնասէր անձի մը մէջ

կը ծնի կասկածը՝ թէ մի գուցէ Ծնորհալիի օրերուն արդէն իսկ գոյութիւն ունեցած ըլլան վերափոխման եօթեայ շարականները, որոնց հեղինակին մասին չունինք դեռ բացայայտ աղբիւրներ:

Քայլ մըն ալ առաջ երթալով, եթէ նոյն մտահոգութենէն մղուած՝ քննելու ըլլանք տօնացոյցները եւ ճաշոցները, այնպէս կը թուի որ հարցը՝ եթէ ոչ ամբողջապէս՝ գոնէ մասամբ լուսաբանած կ'ըլլանք: Առձեռն ունինք երեք հնագոյն տօնացոյցներ, որոնց շարադասութենէն եւ պարունակութենէն կրնանք եզրակացնել թէ նրմոյշներ են նախաշնորհալեան շրջանին կատարուած տօներուն, եւ չեն ենթարկուած տօնացոյցի նոր խմբագրութեան: Երեք տօնացոյցները գրուած են 1272ին (Երեւան՝ թիւ 179), 1278ին (Երեւան՝ թիւ 759), 1287ին (Ս. Ղազար՝ թիւ 186), որոնք փոխն ի փոխ կը կրկնեն «կիրակի Աստուածածնի փոխումն եւ է յաւոտտոսի ԺԵ. երես աւուրս տաւնէ: Դշ. ապաշխարութեան...», «... երեք աւր տաւներս, զկնի երրորդ աւուր տաւնիս՝ Դշ...», «վերափոխում, աւուրս երես տաւեա, զկնի Գ. աւուրն տաւնիս Դշ...»: Այս երեք տօնացոյցներն ալ վարդավառի համար ունին միայն մէկ օր, որու կը յաջորդեն «Բշ. Աբրահամայ, Խորենայ...», Գշ. Յիզաբուղտի վկայի...»: Նոյնպէս միօրեայ է Հոգեգալուստեան տօնը: Հոս ստիպուած կը կրկնենք շարակնոցներու մասին մեր խորհրդածութիւնը. սկսեալ ամենահին տօնացոյցներէն՝ վերափոխումը կը տօնուի եօթեայ, մինչ վարդավառն ու Հոգեգալուստը՝ կը մնան միօրեայ տօնակատարութեամբ. վերջիններուս մասին հաստատ գիտենք՝ թէ Ծնորհալիով ստացած են իրենց այսօրուան վիճակը. միթէ այս եւս չէ՞ կարելի նկատել իբր նշան՝ թէ վերափոխման եօթեայ տօնակատարութիւնը կը կանխէ վարդավառի եւ Հոգեգալուստեան բազմօրեայ տօնակատարումները:

Հետաքրքրական են նաեւ ճաշոցները: Ունինք ամենահին երկաթագիր ճաշոցներու շարք մը, Երուսաղէմեան աւանդութեամբ, թարգմանուած Ս. Սահակ Հայրապետի օրով, եւ հասած մինչեւ մեր օրերը, ինչ որ կը կազմէ ազգային դանձ մը եւ միաժամանակ ամենաթանկազին աղբիւր մը՝ ուսումնասիրելու համար Երուսաղէմի առաջին դարերու եկեղեցական աւանդութիւնները: Ինչ որ կը տեսնուի, ճաշոցի առաջին խմբագրութիւն մը պէտք է կատարուած ըլլայ Ծնորհալիէ քիչ առաջ, ուր վերափոխման համար նշանակուած են երեք օրերու ընթերցումներ, մինչ վարդավառի համար ընթերցուածը միօրեայ ըլլալէ զատ, իսկոյն կը յաջորդեն «Բշ. Աբրահամ...», «Գշ. Յիզաբուղտայ...» տօներու ընթերցումները: Այս աւանդութիւնը դեռ պահուած կը գտնենք Ս. Ղազարի 1349ին օրինակուած ճաշոցին մէջ: Եթէ ընդունինք որ Ծնորհալին է վերափոխման եւ վարդավառի եօթեայ շարականներու հեղինակը, որոնց հետ նաեւ եօթեայ ընթերցումներու կարգադիրը, ինչպէս բացատրել

Վերափոխման եռօրեայ ընթերցումներու կողքին՝ միօրեայ տօնա-
կատարութեամբ Վարդավառ մը:

Ենթադրենք պահ մը որ Շնորհալի Հայրապետին ըլլան Վերա-
փոխման եւ Վարդավառի Բ. եւ Գ. օրերու թէ՛ շարականները եւ թէ՛
ընթերցումները: Նախաշնորհալեան տօնացոյցներու եւ ճաշոցնե-
րու մէջ մնացած է հին աւանդութիւնը՝ նկատմամբ Վարդավառին
յաջորդող Բ. եւ Գ. օրերուն, մինչ ամենեւին անծանօթ է մեզի Վե-
րափոխման յաջորդող երկու օրերու սուրբերու տօներու մասին որեւէ
աւանդութիւն, որովհետեւ Երուսաղէմեան ճաշոցի յաջորդող խմ-
բագրութեան առաջին իսկ վայրկեանէն՝ Վերափոխումը կը ներկա-
յանայ եռօրեայ ընթերցումներով: Վարդավառի ընթերցումներու
նկատմամբ՝ հետեւեալ կէտն ալ ուշադրութեան առարկայ
դարձնելու է. մեր Ս. Ղազարի 1335ին օրինակուած ճաշոցը դեռ նոր
որդեգրած կը տեսնուի Վարդավառի Բ. եւ Գ. օրերու ընթերցում-
ները, այնքան որ խառնած է զանոնք Բ. եւ Գ. օրերու սուրբերու
ընթերցումներուն հետ. Վարդավառի Բ. օրուան ընթերցումին կը
յաջորդեն «Բ. Աբրահամու եւ Խորենայ...» ընթերցումները, իսկ
Վարդավառի Գ. օրուան ընթերցումներուն կը հետեւին «Գ. Յիզա-
բուղտայ...» ընթերցումները: Այս անորոշ եւ խառնակ ձեւին կը
համաձայնին շատ մը տօնացոյցներ, որոնք Վարդավառի Բ. օրուան
հակադէմ ձեւով հին աւանդութիւնը՝ «Բ. Աբրահամու... հ. Բ. Որ
ի մարտի» աւելցնելով «թէ տաւն չառնես Վարդավառի՝ դու զայս
կատարես Բ. իս» (Ձեռ. Ս. Ղազարի, Թիւ 686, Թղ. 50): Դեռ ԺԶ.
դարու տօնացոյց մը (Ձեռ. Ս. Ղազարի, Թիւ 1989), սուրբերու տօ-
նը կը խառնէ Վարդավառի եռօրեային, ու անպատեհութիւնը տես-
նելով՝ կ'աւելցնէ թէ «բայց դու հետ այսմ աւուրցն տօնես»:

Արդ, երկու տօներու — Վերափոխման եւ Վարդավառի — եռօր-
եայ ընթերցումներու համեմատութիւնը ցոյց կու տայ Վերափոխ-
ման եռօրեայ տօնակատարութեան հնութիւնը, մինչ Վարդավառի
եռօրեայ անհաստատ եւ թափառական վիճակը՝ կը համաձայնի շա-
րականներու աւանդութեան, որոնք առանց բացառութեան՝ Վերա-
փոխումը ունին եռօրեայ կանոններով:

Հոգեզայտեան շարականներու մասին խօսուած ատեն՝ յիշեցինք
թէ Շնորհալիին են Բ-Յ օրերու կանոնները, եւ թէ ճաշոցներու մէջ
պահուած վկայութեան համաձայն՝ նոյն Հայրապետին են Բ-Է օրե-
րու ընթերցումները. գոնէ հետք մը մնացած է ասոր առնչու-
թեամբ, մինչ ոչ մէկ ակնարկ կը գտնենք նկատմամբ Վերափոխման,
որ ձեռագիրներու մէջ կը յայտնուի եռօրեայ շարականով եւ ընթեր-
ցումներով, ինչ որ նշան մը եւս կրնանք համարիլ անոր վաղեմի
հնութեան: Յաջորդ դարերու տօնացոյցներու համաձայն՝ Շնորհալի

Հայրապետը իննօրեայ տօնակատարութեան վերածած է Վերափոխ-
ման տօնը. գուցէ այս եղելութիւնն է որ առիթ տուած է ենթադրե-
լու՝ թէ ինքն է նաեւ Բ. եւ Գ. օրերու շարականագիրը. մինչ մենք
հիմ ունենալով վերեւ քննուած ճաշոցները, տօնացոյցները եւ շա-
րականները՝ կրնանք ենթադրել որ Շնորհալի Հայրապետը արդէն
իսկ գոյութիւն ունեցող եռօրեայ մը վերածած է իննօրեայ տօնա-
կատարութեան:

Այս ամէնը այսպէս ենթադրելի է ետք, մեզի այնպէս կը թուի՝
թէ Շնորհալիի օրերուն արդէն իսկ գոյութիւն ունէին Վերափոխման
Բ. եւ Գ. օրերու կանոնները, որոնց հեղինակը պէտք է ըլլայ Շնոր-
հալիէ տարբեր անձ մը (պարած իրմէ քիչ առաջ), եւ մանաւանդ
Շնորհալիէ նուազ փայլուն եւ հանճարեղ գրիչ մը, որովհետեւ շա-
րականները գրուած են առաջին օրուան շարականներուն հետեւողու-
թեամբ, բազմաթիւ յարասութիւններով, օրինակութիւններով, ո-
րոնց հեղինակը ճանչնալ Շնորհալին՝ թերեւս նուաստացուցիչ է շա-
րականագիր Հայրապետին համար: Շնորհալի պէտք չունէր հետե-
ւողութեան, իր մէջ կը յորդին դադափարները, պատկերները, դե-
ղեցիկ ասացուածքները. բաւական է քննել Վերափոխման առթիւ գը-
րած տաղն ու անոր յորդորակը, Հոգեզայտեան Բ-Յ օրերու շարա-
կանները, Վարդավառի Բ-Գ օրերու պատկերները, տեսնելու հա-
մար հոն դադափարներու ճոխութիւն եւ ստեղծագործ թափանցիկ
հոգի մը:

Ահա ցանկ մը, Վերափոխման առաջին օրուան շարականներէն
քաղուած իմաստներու, որոնք գրեթէ նոյնութեամբ կը թափառին Բ.
եւ Գ. օրուան շարականներուն մէջ.

Ա. օր Վերափոխման

Բ. եւ Գ. օր Վերափոխման

Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին, ե-
րանի յառաջեալն եւ սուրբ կուսանքն
... միաձայնեալ առին՝ օրհնեալ (Օրհ.
1).

Այսօր... ժողովեալ սրբոց առաջելոցն
եւ իմաստուն սուրբ կուսանացն (Գ. Օրհ.
1), ուստի եւ դասք առաջելոցն եւ ի-
մաստուն սուրբ կուսանացն միաձայնե-
լով (Գ. մ. 3), համաձայնեալ... Եղա-
նակէին՝ օրհնեալ (Բ. օրհ. 6).

Այսօր դնելով զսուրբ կոյսն առ դրանն
գերեզմանին՝ սպասէին (օրհ. 2).

Այսօր... պարակցեալ շուրջ գգրեղմա-
նաւ սրբոյ կուսին՝ եղանակէին (Բ. հ. ց.
6).

Տեսեալ զարարին եկեալ բազում հրեշ-
տակօք (օրհ. 2).

Բանն անմարմին... եկեալ բազմութեամբ
հրեշտակացն (Բ. օրհ. 5).

Այսօր մտանելով յերկնային խորանն
ընդ իմաստուն կուսանսն (օրհ. 3).

Վերափոխեալ զգեղ յերկնային խորան-
սըն այսօր... ուստի եւ դասք առաջելոցն
եւ իմաստուն սուրբ կուսանացն (Գ. մ.
3).

Այսօր ընդ բազմաչեայ ջրովբէն եւ ընդ վեցթեւեան սրովբէն... երգեմք եւ մեք ասելով (օրհ. 4).

Ձկուսութեանց մայրն փոխադրեաց բանն Աստուած (օրհ. 5), Հանգուցեր յանպատում ի կեանս զկուսութեանց մայրն (հց. 3).

Նմանեալ Հրեղինաց դասուցն (օրհ. 6).

Անմարմին զուարթնոցն ամփոփեալ ի տեղի գերակայիցն (օրհ. 7).

Այսօր յուսապատար խնդութեամբ... նուազեմք քեզ Հոգեղէնքս ընդ Հրաբուն սեռիցն, տօնախմբելով զյիշատակ կուսի (օրհ. 8).

Որ զնախամօրն զյանցանս երկանց եւ բարձ... այսօր առ ի մէջ ի վերին զօրսն փոխեցեր (հց. 1).

Եւ զորդիդ քո միածին մարմնով ծնաւ (հց. 1).

Մարմնանալ ի յանձն առեր ի սրբոյ կուսէն (հց. 2).

Փոխեցեր զնախաստեղծին ծնունդն (հց. 1).

Այսօր պարզեւօք Հանգուցեր յանպատում ի կեանս (հց. 3).

Ի գիրկս քո բարձեալ կրեցեր (մ. 2).

Որ ի վեցթեւեան սրովբէն եւ ի բազմաչեայ ջրովբէն փառաբանիս... ընդ որս եւ մեք (Գ. հց. 6), եւ մեք երգեսցուք (Գ. տ. 3).

Ձկուսութեանց զմայրն Հանգուցեր ի լուսեղէն խորանս (Բ. ո. 2).

անմարմնական դասուք Հրեղինացն (Բ. օրհ. 4).

Իջեալ անմարմնական դասուք... փոխադրեաց (Բ. օրհ. 5), բարձրացուցեր... գերակայիցն կայանս (Բ. օրհ. 2).

Այսօր եւ մանկւնք եկեղեցւոյ ուրախութեամբ տօնեն, յերկրի զփոխումն կուսին (Բ. տ. 3).

Ղհոգեղէն բնութիւնս տեսեալ... ձայնիւ քեզ երգեմք (Գ. օրհ. 5). դասք Հոգեղինացս փառաբանեմք (Գ. հց. 5).

Հրաբուն սեռիցն փոխադրեալ (Բ. մ. 3). Հրաբուն սեռիցն փոխադրեալ (Գ. օրհ. 3).

Ձնախամօրն երկանց բարձողն այսօր դարձուցեր ի փառս առաջին (Բ. հց. 1).

Ձնախամօրն երկանց բարձողն... միածին իջեալ փառօք փոխադրեաց (Գ. օրհ. 4):

Որ զդատակնիք երկանց անիծից նախամօրն ելոյծ, այսօր... (Գ. հց. 1).

Բանն անմարմին որ ի քէն մարմնացաւ (Բ. օրհ. 5). Որ մարմնով ծնաւ զքեզ (Բ. հց. 2). մարմնով ծնար ի սրբոյ կուսէն (Բ. ո. 2).

Յառաջին... փառսն դարձուցեր սովաւ զնախաստեղծն (Գ. հց. 1).

Այսօր փոխեցեր... յանպատում ի կեանս (Բ. ո. 1).

Բանն... ի գիրկս քո բարձեալ կրեցաւ (Բ. օրհ. 5).

Դիեցուցանելով... զկուսական քո սուրբ զկաթն (մ. 2).

Հրճուին Հրեղտակք ի յերկինս (ո. 1).

(Գեղ միայնոյ) մօր եւ կուսի (ո. 3).

Աստուած... Հանգուցեալ ի Հրեղէն կառս (տ. 1).

Վերափոխեալ... յանպատում ի կեանս (տ. 2).

Ջեղ մաքուր կաթամբ կերակրեաց (Բ. օրհ. 3).

Եւ կաթնասուն եղեր (Բ. ո. 3).

Ձուարճացան Հրեղտակք ի յերկինս (Բ. տ. 1).

(Մնալ ի քէն) մայր եւ կոյս (Բ. օրհ. 4). (Յաւանդումն... Հոգւոյ) մօր եւ կուսին (Բ. տ. 2).

(Իջեալ ի փոխումն) մօր քո եւ կուսի (Գ. ո. 2).

Վերացոյց զքեզ հրակերպ կառօք (Բ. օրհ. 5).

Հրանիւթ կառօք... վերաբերեալ (Գ. օրհ. 5).

Փոխեցեր ի կեանս անպատումս (Բ. հց. 2):

Առաջին օրուան կանոնի Վերափոխման գաղափարը նշանակելու համար գործածուած բայերը կը կրկնուին երկրորդ եւ երրորդ օրուան կանոններուն մէջ, գրեթէ ստրկօրէն, եւ չենք հանդիպիր նոր բառերու կամ գաղափարներու. մինչ Շնորհալիի գրած Վերափոխման Տաղին եւ Յորդորակին մէջ կը գտնենք նոր ձեւեր եւ ըսելու նոր կերպեր, որոնք կրնային յայտնուիլ շարականներուն մէջ, եթէ նոյն անձը ըլլար հեղինակը. այսպէս՝ բոլորովին Շնորհալեան են հետեւեալ եզրները, քաղուած իր իսկ գրած տաղէն, Վերափոխումի գաղափարը արտայայտող. «երթալ յերկինս», «գգեգ, այսօր, որդիմ քո միածին եկեալ, փոխեաց» (խօսքը ուղղուած է Տիրամօր), «վերասլացեալ յերկինս», «յերկնամեմ յաստուածակերտ խորանս», «փառօք պայծառացեալ մտեր»:

Առաջին օրուան կանոնին մէջ վերափոխման գաղափարը արտայայտող բայերը պարզապէս կը կրկնուին, ըսինք, Բ. եւ Գ. օրուան կանոններուն մէջ (առանց ոչ մէկ Շնորհալեան նորութեան). ահա անոնց ցանկը.

Ա. օր Վերափոխման

Բ. եւ Գ. օր Վերափոխման

Ձկուսութեանց մայրն փոխադրեաց (օրհ. 5).

Փոխադրեալ դասեցեր յերկինս (հց. 2).

Փոխադրեցեր ի յերկինս (Բ. օրհ. 1).

Փոխադրեաց զքեզ (Բ. օրհ. 4). Փոխադրեալ ի լուսածն խորանս (Բ. մ. 3).

- Փոխադրեալ յերկինս (Գ. օրհ. 3).
- Փոխադրեաց յիմանալի... (Գ. օրհ. 4).
- Աւանդեալ զօրբասնեալ հոգին (օրհ. 6).
- Ի վերին զօրսն փոխեցեր (հց. 1).
- Փոխեցեր ի կեանս (Բ. հց. 2).
- Փոխեցեր յանպատում ի կեանս (Բ. ո. 1).
- Փոխեցեր... (Գ. հց. 2).
- Աւանդ բարձրացեալ (հց. 5).
- Վերապատուեմք զփոխումն քո (հց. 5).
- Վերափոխեալ ի դասս առաքելոց (հց. 6).
- Վերափոխեալ դառնաց (տ. 2).
- Վերափոխելով յանպատմելի (տ. 3).
- Վերամբարձեալ զմաքրական մարմինն (օրհ. 7).
- Ֆարձրացուցեր ի ստորնայնոցս (Բ. օրհ. 2).
- Ի փոխումն Աստուածամօր (Բ. հց. 5).
- Ջփոխումն կուսին (Բ. տ. 3).
- Ջփոխումն Աստուածամօր (Գ. օրհ. 1).
- Ի փոխումն մօր (Գ. ո. 2).
- Վերափոխեալ զքեզ (Գ. մ. 3).
- Վերհամբարձին ի յերկինս (Բ. հց. 7).
- Վերհամբարձին յաթոռ փառաց (Բ. ո. 3).
- Վերհամբարձար այսօր (Գ. հց. 5).

Այս բոլոր խորհրդածութիւններով եւ անդրադարձութիւններով կը փակենք այս էջը, որ գրգռումը պէտք է ըլլայ աւելի եւս հետապնդելու սոյն հարցը, յանգելու համար վերջնական եւ դրական եզրակացութիւններու:

13. ԱԻԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիրակոս Գանձակեցիի յայտնի վկայութեամբ՝ Շնորհալի գրած է Աւագ Բշ. Գշ. Դշ. օրերու Օրհնութիւնները, որոնց մասին ամենեւին կը լռեն շարականացոյցները: Արդարեւ անբացատրելի երեւոյթի մը առջեւ կը գտնուինք. հնագոյն թիւ 97 շարականոցը ունի

երեք Օրհնութիւններն ալ, 1193ի օրինակը ունի զանոնք բաց գրութեամբ, ինչ որ նշան է անոնց նոր ըլլալուն: Այս կացութեան առջեւ՝ հոս ալ չենք կարող վերջնական որոշողութեան մը յանգիլ, որովհետեւ անբացատրելի կը մնայ այն եղելութիւնը՝ թէ ի՞նչպէս մինչեւ Շնորհալի Աւագ շաբթուան առաջին երեք օրերը գուրկ մնացած ըլլան Օրհնութենէ, մինչ յաջորդ երեք օրերը ունենան իրենց Օրհնութիւնները: Նմանապէս ստոյգ կերպով գիտենք թէ Աւագ Ուրբաթի «Այսօր ի կատարումն» հետեւակ շարականը Շնորհալիինն է. արդեօք ուղի՞ք է հաստատելը՝ թէ թիւ 97 շարականոցը շատ կանուխէն որդեգրած է (Շնորհալիի) Աւագ Բշ. Գշ. Դշ. օրերու Օրհնութիւնները, եւ նոյն Շնորհալիի Աւագ Ուրբաթի հետեւակ շարականը՝ ոչ:

Անբացատրելի է նաեւ Աւագ Շաբաթ օրուան Օրհնութեան մասին հասած վկայութիւն մը: Սարգիս Երէցի տօնացոյցին մէջ կը կարդանք. «Ծբ. Թաղմանն Տեառն. շարականն իւրն եւ զնորերն այլ ասա», ու ևս ըսելով կը հասկնայ Օրհնութեան երկրորդ եւ երրորդ մասերը («Կեանքանիմ յաւիտեանից», «Կուսածիմ մարմնով»), որոնք բաց գրութեամբ օրինակած է՝ կրճատ «Պարգեւատում ամենեցուն»էն ետք: Սահակ Ամատունի այս «նոր» յաւելեալ տունները կ'ընծայէ Շնորհալիի գրչին³⁹, ինչ որ անհիմն կը թուի մեզի, որովհետեւ բացի Սարգիս Երէցի վկայութենէն՝ ուրիշ ապացոյց չունինք անոնց նոր ըլլալուն. թողունք որ նոյնիսկ Սարգիս Երէց Շարականաց հեղինակներու ցանկին մէջ կը յիշատակէ «Այսօր ի կատարումն» հետեւակ շարականին Շնորհալիի պատկանելի, մինչ ամենեւին կը լռէ Աւագ Շաբաթի Օրհնութեան մասին:

Նմանապէս անբնական երեւոյթ մըն է որ Սարգիս Երէց Օրհնութեան երկրորդ եւ երրորդ մասերը բաց ձեւով գրէր, երբ նոյն շարականները իրենց ամբողջութեամբ կը գտնենք թիւ 97 շարականոցին մէջ, մինչ 1193ի օրինակին մէջ՝ այդ բոլորը օրինակուած են կրճատ ձեւով, իբր հին ու ծանօթ երգեր:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԱՆԻ ՄԷԿ ԵՐԿԻՆ ՄԱՍԻՆ

Շնորհալիի շարականներու մասին մեր տեսութիւնները աւարտելէ առաջ, հարկ կը համարինք յիշել Տիար Գրիգոր Յակոբեանի դնահատելի ուսումնասիրութիւնը «Ներսէս Շնորհալի» խորագրով⁴⁰, ուր երկար կը խօսի նաեւ շարականներու մասին: Բնականաբար, բանասիրական բնոյթ ունեցող գիրք մը չէ այդ հատորը, այլ ժողովրդական եւ ընթացիկ ձեւով գրուած աշխատասիրութիւն մը. բայց

39. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԱՄՍՏՈՒՆԻ, ամգ, էջ 92:

40. ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԱՆ, Ներսէս Շնորհալի, Երեւան, 1964:

որովհետեւ սպրդած են հոն ինչ ինչ վրիպակներ՝ նկատմամբ շարականներուն՝ կարեւոր կը համարինք թուարկել եւ ուղղել զանոնք:

1. «Նորագեալ կղզիք» Զատիկի յաջորդող Նոր կիրակիի Օրհնութիւնն է: Ծարականացոյցներու համաձայն՝ ասոր հեղինակն է Ներսէս Լամբրոնացի, եւ ոչ թէ Ներսէս Շնորհալի: Ոչ մէկ ապացոյց ունինք Շնորհալիի պատկանելուն, թողունք որ ներքին իմաստները եւ բառամթերքը անհաշտ են Շնորհալիի միւս շարականներուն հետ: Ծարականին հեղինակին մասին Աւետիքեան կը գրէ առանց տատամսելու «յօրինեաց զկանոնս սուրբն Ներսէս Լամբրոնացի»⁴¹, անշուշտ հիմնուած Գրիգոր Տաթեւացիի վկայութեան վրայ՝ թէ «զՆորոգեալ կղզիքն... Ներսէս Լամբրոնացին»: Ամբողջ կանոնը առաջին անգամ կը յայտնուի ԺԳ. դարէն հասած շարակնոցներու մէջ, այսինքն՝ սկսած է դործածուիլ շարակնոցի նոր խմբագրութեամբ:

2. «Յարեաւ Տէրն ի գերեզմանէն» Յարութեան (Յինանց) շարականներու ԳԿ. Տէր յերկնիցներու առաջին տունն է, որ մաս կը կազմէ Յինանց ամբողջ կանոնին եւ կ'ընծայուի Մովսէս Խորենացիի եւ կամ Բարսեղ Զոնի⁴²: Շատ հաւանաբար Յակոբեան կարդալով «զՅարութեան վառ ձայնին օրհնութիւնն» բացատրութիւնը, որ շարականացոյցերու համաձայն գրուած է Շնորհալիէ, թիւրիմացութեամբ մը փնտռած է Յարութեան ԳԿ. (վառ ձայն) Համբարձինքն՝ որու մէջ, որոնք Զատիկի յաջորդող շաբթուան ընթացքին կ'երգուին իբր Օրհնութիւն. մինչ իրականութեան մէջ պէտք էր փնտռել Յարութեան ԳԿ. Աւագ Օրհնութիւններուն մէջ, որ կը սկսի ոչ թէ «Յարեաւ Տէրն ի գերեզմանէն» այլ «Երգեցէ՛ք Տեառն երգ մոր» բառերով:

3. «Ուրախ զգացումներով եւ աշխոյժ տողերով են գրուած (Վարդավառի) երկրորդ օրուայ Մեծացուցէն», կը ծանուցանէ մեզի Գր. Յակոբեան, եւ կու տայ անոնց մեկնութիւնը⁴³: Բաւական է ըստ կամս բանալ որեւէ ձեռագիր շարակնոց, համոզուելու համար որ Վարդավառի երկրորդ եւ երրորդ օրերը զուրկ են Մեծացուցէ շարականէ, եւ որով Շնորհալի գրած ըլլալով հանդերձ ամբողջ կանոնները (Բ. եւ Գ. օրուան), չէ շարադրած անոնց Մեծացուցէները, որոնք փոխ կ'առնուին տարբեր կանոններէ:

4. Գր. Յակոբեան Շնորհալիի կ'ընծայէ Հայրապետաց կանոնին «յատկապէս Մանկունքը» «Ով հրաշալի մախախարք»ը, ու հոն կը սիրէ տեսնել Շնորհալի Հայրապետին ամբողջ հոգին եւ համոզումը:

41. Հ. Գ. ԱԻԵՏԻՓԵԱՆ, ամդ, էջ 294:

42. Հմմտ. Հ. Գ. ԱԻԵՏԻՓԵԱՆ, ամդ, էջ 284-5:

43. Գ. ՅԱԿՈԲԵԱՆ, ամդ, էջ 104:

ները, եզրակացնելով «թէ ինչպէս Շնորհալին, իր ամբողջ կեանքի ընթացքում, թէ՛ դործնականապէս եւ թէ՛ բազմաթիւ արձակ ու չափածոյ դործերով, հետեւողականօրէն պայքարել է Քաղկեդոնի որոշումների դէմ»⁴⁴: Վերեւ մեր կատարած ուսումնասիրութեան մէջ ցոյց տուած ենք, հիմնուած ձեռագրական տուեալներու վրայ՝ թէ Հայրապետաց կանոնի Մանկունքը «Ով հրաշալի մախախարք» շարականը Շնորհալիէն շատ առաջ գոյութիւն ունեցած է, որով չէ կարելի Շնորհալիի ընծայել զայն: Թողունք որ Շնորհալիի նման սուրբ Հայրապետ մը՝ որ ամբողջ կեանքը նուիրեց եկեղեցիներու միութեան դործին, սորվեցնելով ամէնուն՝ սէր եւ համբարշտութիւն, չէր կրնար այդպիսի պայքարող հոգեբանութիւն մը ունենալ, հակոտնեայ՝ իր քարոզածին եւ հոգեբանութեան: Ինչ որ կը տեսնուի՝ Յակոբեան չէ ըմբռնած ոչ իսկ քաղկեդոնականութեան հարցը, այնքան որ նրման մեկնութիւններ կու տայ նաեւ Հոգեգալստեան շարականներուն՝ գրելով. «Շնորհալին գրել է Հոգեգալստեան Բ. Գ. Դ. Ե. օրերի կանոնները, որոնք գրեթէ բոլորն էլ դաւանաբանական են եւ ունին հակաքաղկեդոնական բնոյթ»⁴⁵:

5. «Ծարականներում մեր ազգային եւ աշխարհիկ հերոսներին առաջին անգամ Շնորհալին է գովերգում»⁴⁶. «... (Աւարայրի) պատերազմի հերոսներին նուիրուած առաջին բանաստեղծութիւնները գրել է Ներսէս Շնորհալին, որոնք յայտնի են «Նորանորոգ պատկառ» եւ «Արիացեալք» վերնագրերով»⁴⁷: Որոշ դիտենք թէ «Նորանորոգ» Շնորհալիին է, բայց ոչ նոյնպէս «Արիացեալք»ը, որու մասին անդրադարձանք վերեւ, ու աւելորդ կը համարինք կրկնել հոս:

6. Ղեւոնդեանց տօնակատարութիւնը Շնորհալիէ առաջ գոյութիւն ունեցած է Հայ եկեղեցւոյ մէջ. հին խմբագրութեան պատկանող շատ մը ձեռագիրներու մէջ պահուած են նախաշնորհական զոյգ շարականները «Երգեմք ձեզ» եւ «Պայծառացա՛մ այսօր», եւ վերեւ մեր անդրադարձութիւններուն մէջ չեղտեցինք որ Ղեւոնդեանց տօնը Շնորհալիով ստացաւ նոր կանոն (Օրհնութիւն, Հարց, Ողորմեա, Տէր յերկնից), բայց ոչ Համբարձինքը:

(Շաբ. 2 եւ վերջ)

Հ. ՍԱՀԱԿ ԶԵՄՃԵՄԵԱՆ

44. Գ. ՅԱԿՈԲԵԱՆ, ամդ, էջ 109:

45. Գ. ՅԱԿՈԲԵԱՆ, ամդ, էջ 110:

46. Գ. ՅԱԿՈԲԵԱՆ, ամդ, էջ 120:

47. Գ. ՅԱԿՈԲԵԱՆ, ամդ, էջ 123: